

Վարկային հայտի բավարարման գործոններ

1. Վարկառուի/երաշխավորի կողմից ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերին ամբողջությամբ:
2. Վարկային հայտի ներկայացման նախորդ 24 ամիսների ընթացքում Վարկառուն չպետք է ունենա 30 օրից ավել ուշացումներ, որից վերջին մեկ տարվա ընթացքում՝ 12 օր (բացառությամբ երաշխավորությունների գծով), իսկ գործող վարկային պարտավորությունների վարկային ռիսկի դասը ստանդարտ է:
3. Վերաֆինանսավորվող վարկն առնվազն պետք է սպասարկված լինի 12 ամիս և վերջին 12 ամիսների ընթացքում ժամկետանց օրերի հանրագումարը չգերազանցի 5 օրը: Վարկառուի գործող բոլոր վարկային պարտավորությունների՝ ներառյալ տրամադրված երաշխավորությունների (բացառությամբ այլ անշարժ գույքի, ոսկու, ավտոմեքենայի, դրամական միջոցների գրավով ապահովված պարտավորությունների, ինչպես նաև հիփոթեքային վարկերի) և տրամադրվող վարկի հանրագումարը չի կարող գերազանցել նախատեսված վարկ/գրավ հարաբերակցության սահմանված ցուցանիշ +5%:
4. Եվ այլն:

Վարկային հայտի մերժման գործոններ

1. Վարկառուի/երաշխավորի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:
2. Վարկային հայտի ներկայացման նախորդ 24 ամիսների ընթացքում Վարկառուն ունի 30 օրից ավել ուշացումներ, որից վերջին 12 ամիսների ընթացքում՝ 20 օր (բացառությամբ երաշխավորությունների գծով), իսկ գործող վարկային պարտավորությունների վարկային ռիսկի դասը ստանդարտ չէ:
3. Հաճախորդի վարկունակության և վճարունակության գնահատման արդյունքում եզրակացությունը եղել է բացասական:
4. Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի են դարձել հաճախորդի վերաբերյալ պահպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի վճարունակությունը:

5. Բանկում վարկային հայտերի վերաբերյալ որոշումներ կայացնելը իրավասություն ունեցող լիազոր մարմինը չի բավարարել հաճախորդի վարկային հայտը:
6. Գրավադրող անշարժ գույքը չի համապատասխանում ներկայացված պահանջներին:
7. Վարկային հայտը հաստատվել է, սակայն հաճախորդը հաստատմանը հաջորդող 10 օրերի ընթացքում չի ներկայացել կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը:
8. Եվ այլն: